Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թ.
փետրվարի 22-ի նիստի N 7
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության բնական պաշարների արդյունավետ օգտագործման համակարգի համար առաջնային նախապայմանը բնական պաշարների կայուն կառավարումն է, որը հիմք է հանդիսանում օգտակար հանածոների պաշարների, անտառների, հողային և ջրային ռեսուրսների օգտագործման ու պահպանության, կենսաբազմազանության ապահովման ոլորտի պետական քաղաքականության իրականացման և դրանից բխող առաջնահերթությունների ու գործողությունների սահմանման և պաշարների կառավարմանն ուղղված առաջնահերթ ռազմավարական խնդիրների իրականացման համար:

2. Սույն ռազմավարությամբ նախատեսվում է նախադրյալներ ստեղծել ՀՀ տարածքում բնական պաշարների կայուն կառավարման համար՝ առկա բնական ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողի, օգտակար հանածոների, կենդանական ու բուսական աշխարհի) որակական ու քանակական ցուցանիշների, բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով դրանց առաջացած փոփոխությունների նկատմամբ կանոնավոր մոնիթորինգի իրականացմամբ բնական ռեսուրսների օգտագործելի չափաքանակները գնահատելու և դրանց տնտեսական արժեքը որոշելու համատեքստում:

3. Օգտակար հանածոների պաշարների արդյունավետ կառավարման նպատակն է հանքարդյունաբերության ոլորտի կայուն զարգացման ապահովումը, ինչը հնարավոր է իրականացնել բնապահապանական, սոցիալական և տնտեսական հիմնահարցերի համակցված և համակարգված գործողությունների շնորհիվ: Իսկ ոլորտի կայուն զարգացմանը նպաստելու համար անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովելու հանրապետությունում ինչպես մետաղական այնպես էլ ոչ մետաղական հումքի համալիր մշակումը, արժեքավոր տարրերի առավելագույն կորզումը, պատրաստի արտադրանքի ստացումը, բարձր արտադրողականության, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրումը, ընդերքի տնտեսապես էֆֆեկտիվ շահագործումը և ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

4. Ռազմավարությունը մասնավորապես անդրադառնում է անտառային ոլորտի բարեփոխումների հիմնական խնդիրներին, անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում արդյունավետ կայուն կառավարման համակարգի ստեղծմանը, ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, անտառային օրենսդրության մեխանիզմների կիրարկման ապահովմանը, պահպանության կարողությունների և կառավարման կառուցվածքային միավորների հզորացմանը և դրանց հասնելու ուղիներին:

5. Ռազմավարությամբ նախատեսվում է նախադրյալներ ստեղծել բնակչությանը կայուն, հուսալի և անվտանգ խմելու ջրի մատակարարման, ջրի որակի, շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովման, խմելու ջրի մատակարարման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացման, ջրահեռացման համակարգերի վերակառուցման և կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման համար:

6. Ոռոգման ջրի բնագավառում կարևորվում է ոռոգման համակարգերի առկա ենթակառուցվածքների արդիականացումը, ոռոգելի հողատարածքների ավելացումը, նոր ջրամբարների շինարարական աշխատանքների մեկնարկմամբ ջրային ռեսուրսների կուտակման և ամբարման նախադրյալների ստեղծումը, ինչպես նաև սակավաջրության հիմնահարցի լուծման միջոցառումների իրականացումը: Միաժամանակ կարևորվում է նոր տեխնոլոգիաների ներդրմամբ ջրի խնայողական ռեժիմով օգտագործման խթանումը, հիդրոտեխնիկական կառուցվածքների պատշաճ պահպանման, նորոգման և ամրապնդման աշխատանքների իրականացումը:

7. Ոռոգման ոլորտում նախատեսվում է կառուցվածքային բարեփոխումների իրականացում, մասնակցային կառավարման կիրառում, ջրօգտագործողների հետ առավելագույնս թափանցիկ և նոր որակի հարաբերությունների ներդրում:

II. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

8. Բնական պաշարների կառավարման ռազմավարության ընդունման նպատակն է բնական պաշարների կառավարման համակարգի կատարելագործումն ու արդիականացումն՝ երկրում բնապահպանական անվտանգության մակարդակի բարձրացման, ներկա և ապագա սերունդների կենսական կարիքների բավարարման համար բարենպաստ և բարեկեցիկ շրջակա միջավայրի ձևավորման, կենսաբազմազանության և բնական ռեսուրսներով ապահովման միջոցով:

9. Օգտակար հանածոների պաշարների կառավարման մասով՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման և գնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ապահովումը,

2) Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ապահովումը,

3) ընդերքօգտագործման աշխատանքների արդյունքում առաջացած ընդերքօգիտագործման թափոնների վերամշակման աշխատանքների ապահովումը:

10. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման մասով՝

1) ջրային պետական կադաստրի տվյալների բազայի կատարելագործում,

2) ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի առանձնացված արդյունավետ կառավարում,

3) ջրային ռեսուրսների հոսքի կառավարումը՝ ջրամբարաշինության, այդ թվում փոքր և միջին ջրամբարների կառուցման ծրագրերի իրականացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառույցների կառավարման արդյունավետության բարձրացումը, օգտագործվող ջրերի հաշվառման գործընթացի զարգացումը և կորուստների կրճատումը.

4) խմելու ջրամատակարարման տևողության և շուրջօրյա ջրամատակարարում ունեցող բաժանորդների թվի շարունակական ավելացումը: Մատակարարվող ջրի, ինչպես նաև սպասարկման որակի ապահովումը, չսպասարկվող համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցումը՝ մասնագիտացված կազմակերպության (կազմակերպությունների) կողմից.

5) ջրային ռեսուրսների միջավազանային տեղափոխումը՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման և էկոլոգիական նպատակով,

6) ջրային ռեսուրսների և հիդրոտեխնիկական կառույցների առանձնացված, համապարփակ կառավարման ապահովումը,

7) ոռոգման ջրամատակարարման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

11. Կենսառեսուրսների կառավարման մասով՝

1) կենսառեսուրսների կայուն կառավարման համակարգի բարելավմանն ուղղված՝

ա.օրենսդրության կատարելագործում.

բ. կառավարման բարելավում և ինստիտուցիոնալ կապերի ամրապնդում.

գ. համակարգում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովում,

2) ՀՀ տարածքում արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման ենթակա կենդանատեսակների և բուսատեսակների հաշվառմանն ուղղված՝

ա. տնտեսական արժեք ներկայացնող և արդյունագործական ու սոցիալական նշանակություն ունեցող տեսակների ուսումնասիրություն և օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումների ապահովում.

բ. ստացված տվյալների վերլուծության հիման վրա GIS քարտեզագրում, նյութերի թվայնացում.

գ. կադաստրի ստեղծման նախադրյալների ապահովում.

դ. մոնիթորինգի համար հիմք հանդիսացող տեղեկատվության հավաքագրում և գրանցում:

12. Հողային ռեսուրսների կառավարման մասով՝

1) հողերի բերրիության պահպանում,

2) հողերի արդյունավետ օգտագործում,

3) խախտված հողերի վերականգնումը և դրանք տնտեսական շրջանառության մեջ ներառում,

4) հողերի պահպանումը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, աղակալումից, արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով աղտոտումից, սողանքներից, անապատացումից, հողի վիճակը վատթարացնող այլ ազդեցություններից,

5) հողերի վիճակի պետական մոնիթորինգի համակարգի զարգացում, մոնիթորինգի արդյունքների փոխանակման համակարգի հստակեցում և գործարկում, նպատակային ծրագրերի համակարգված իրականացում,

6) գյուղական չքավորության նվազեցում և սահմանամերձ համայնքների կայուն հողօգտագործման ծրագրերի իրականացում,

7) հասարակության իրազեկության բարձրացում,

8) էկոհամակարգային մոտեցման պահանջներին համահունչ հողօգտագործման ծրագրերի առկայություն, հողօգտագործման ոլորտում էկոհամակարգային ծառայությունների զարգացում:

13. Հողերի կառավարումն իրականացնում են ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի N26 որոշմամբ սահմանված պետական կառավարման լիազոր մարմինները, որոնք էլ հանդիսանում են սույն ռազմավարության շահառուները:

14. Անտառային ոլորտի կառավարման մասով՝.

1) Անտառային ոլորտի բարեփոխումների ռազմավարության հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կառավարման համակարգի կատարելագործումը, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացումը, ռազմավարական ուղիների ապահովումը:

III. ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

15. Օգտակար հանածոների պաշարների կառավարման համար անհրաժեշտ է ապահովել.

1) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մասով՝

ա. ՀՀ տարածքում օգտակար հանածոների պաշարների ու կանխատեսումային ռեսուրսների վիճակի վերլուծության հիման վրա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների առաջնահերթ ուղղությունների ընտրությունը.

բ. երկրաբանական ուսումնասիրության նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումը,

գ. երկրաբանական ուսումնասիրությանը ներակայացվող պահանջների վերանայմամբ, նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը և միջազգային լավագույն փորձի կիրառումը,

ե. երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ հավաստի տեղեկության ստացումը,

2) օգտակար հանածոյի պաշարների արդյունահանման մասով՝

ա. օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման նորագույն տեխնոլոգիաների ներդրումը՝ թողարկվող արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի նվազեցման նպատակով,

բ. օրենսդրությամբ սահմանված նորմերի և պահանջների կատարումը,

գ. օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզումը և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ և համալիր օգտագործման կամ դրանց պահեստավորումը ու պահպանումը,

դ. ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից, սպառումից զերծ պահումը և պահպանությունը,

ե. օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների և կառույցների սառեցմանն ներկայացվող պահանջների կատարումը,

3) ընդերքօգտագործման ընթացքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների մասով.

ա. ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նորագույն տեխնալոգիաների ներդրման մեխանիզմների ստեղծումը, որոնք հնարավորություն կստեղծեն անթափոն կամ ընդերքօգտագործման թափոնների ծավալների կրճատմանը,

բ. ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների անվտանգ շահագործումը,

գ. շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու միջոցառումների իրականացումը,

ե. բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանությունը:

16. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի առավել արդյունավետ կառավարման սկզբունքներն են.

1) ջրային ռեսուրսների համապարփակ և հիմնավորված կառավարումը,

2) ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված գնագոյացման կարգավորման, խթանման և այլ չափանիշների կիրառումը,

3) ռիսկերի կարգավորման կիրառման ապահովումը,

4) Հայաստանի Հանրապետության բնակավայրերում իրավական ակտերով սահմանված նորմերին և ստանդարտներին համապատասխանող որակով հետզհետե շուրջօրյա ջրամատակարարման ապահովումը,

5) ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի թափանցիկ և մասնակցային կառավարման ապահովումը,

6) անդրսահմանային ջրային ռեսուրսների և ջրահոսքերի կառավարումը,

7) ՀՀ բոլոր բնակավայրերում լուծել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման հիմնախնդիրները,

8) իրականացնել ջրամբարաշինության ծրագրերը,

9) կանխարգելել մակերևութային ջրերի վնասակար ներգործությունը և բարելավել ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակը,

10) իրականացնել Որոտան-Արփա-Սևան ՀՏԿ-ում անվտանգ պահպանման և շահագործման բոլոր միջոցառումները և այլն:

17. Կանխարգելելով և նվազեցնելով կենսառեսուսների պահպանությանն ուղղված հիմնական վտանգների բացասական ազդեցությունները՝ կբարելավվի շրջակա միջավայրի վիճակը: Կենսառեսուրսների կայուն կառավարման ռազմավարության սկզբունքներն են՝

1) Բնության հատուկ պահպանվող տարածքների (այսուհետ՝ ԲՀՊՏ) արդյունավետ կառավարումը,

2) ԲՀՊՏ-ների համակարգում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկայացվածության ապահովումը,

3) ազգային էկոլոգիական ցանցի ստեղծումը:

18. Հողային պաշարների պահպանման ուղղությամբ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1) նվազեցնել հողերի աղտոտումը թափոններով, հատկապես օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններով՝ գույքագրելով ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտները և ներդնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման համակարգ,

2) նվազեցնել ընդերքօգտագործման խախտված հողերի մակերեսները՝ կիրառելով ռեկուլտիվացիայի կենսաբանական մեթոդներ,

3) նվազեցնել արտածին երկրաբանական պրոցեսների հետևանքով հողերի խախտումը,

4) բարձրացնել հասարակության տարբեր խմբերի իրազեկվածությունն անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների, գյուղատնտեսական արտադրության նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ:

19. Անտառների պահպանման ուղղությամբ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1) Հայաստանի Հանրապետությունում քայքայված անտառային ռեսուրսների վերականգնումը, անտառածածկի ավելացումը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական նշանակության գործառույթների պահպանումն ու զարգացումը,

2) անտառների և անտառային հողերի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում արդյունավետ կայուն կառավարման համակարգի ստեղծումը,

3) անտառային էկոհամակարգերի կայունության հիման վրա կլիմայի փոփոխության, մարդածին գործոնների բացասական ազդեցության վերացումը կամ մեղմումը,

4) անտառկազմող ծառերի և թփերի տեսակային կազմի բարելավումը,

5) ապօրինի հատումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

6) անտառային օրենսդրության մեխանիզմների կիրարկման ապահովումը,

7) ոլորտում որակյալ մասնագետներով ապահովումը,

8) անտառների պահպանությունն ապահովող կառուցվածքային միավորների կառավարման արդյունավետության բարձրացումը և կարողությունների հզորացումը:

IV. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

20. Սույն ռազմավարության նպատակների իրագործման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1) օգտակար հանածոների մասով՝

ա. երկրակեղևի առավել խորը հորիզոններում նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ օգտակար հանածոների պաշարների հայտնաբերմանն ուղղված երկրաբանական ուսումնասիրության պետական ծրագրերի իրականացում.

բ. ներդրումային միջավայրի բարելավում՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրմամբ, որը կնպաստի օգտակար հանածոների պաշարների հայտնաբերման նպատակով իրականացվող երկրաբանական ուսումնասիրությունների ծավալների աճին.

գ. երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի և դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատությունը գնահատելու նպատակով իրականացվող փորձաքննական նոր համակարգի ներդրում՝ միջազգային լավագույն փորձի կիրառմամբ.

դ. օգտակար հանածոների պաշարների դասակարգմանը և գնահատմանը ներկայացվող պահանջների վերանայում և ներդաշնակեցում միջազգային լավագույն փորձին.

ե. երկրաբանական տեղեկությունների թվայնացման գործընթացի շարունակակայնության և հրապարակայնության ապահովում,

զ. մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման համալիր ցիկլի, ինչպես նաև արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների ավարտուն ապրանքային արտադրանքի ստացմանը խթանող օրենսդրական հիմքի ստեղծում.

է. ոչ մետաղական հանքանյութի վերամշակման(բացի շինանյութերի) արտադրության կազմակերպման գործընթացին աջակցության ցուցաբերում.

ը. ընդերքի օգտագործման ժամանակ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ընդերքօգտագործման նպատակով օգտագործվող հողերի կարագավիճակի փոփոխման և դեգրադացիայի ներկա բացասական միտումների կրճատում, ինչպես նաև շահագործվող հանքավայրերի հարակից տարածքների անապատացման դեմ պայքարի միջոցառումների կիրառում.

թ. օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի և հանքավայրերի շահագործման հետևանքով խախտված հողերի վերականգնմանն ուղղվելիք միջոցառումների (որպես պայմանագրային պարտավորություններ) կատարման նկատմամբ խիստ վերահսկողության իրականացում:

21. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման ուղղությամբ՝

1) ջրային տնտեսության համակարգում առկա խնդիրներն են՝

ա. համակարգում ջրի տեխնիկական և առևտրային մեծ կորուստների առկայությունը,

բ. մեխանիկական ջրարտադրության ծախսերի համեմատաբար մեծ կշիռը խմելու և ոռոգման ջրի ընդհանուր ծախսերի մեջ,

գ. ջրային համակարգերի մաշվածությունը և դրանով պայմանավորված ջրակորուստների մեծությունը, ընթացիկ ներդրումների անհրաժեշտության շարունակական աճը,

դ. մեխանիկական ջրարտադրության պոմպային սարքավորումների ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, դրանց շահագործման հետ կապված էլ.էներգիայի ծախսերը,

ե. ջրապահանջարկի նկատմամբ ջրի անհամաչափ բաշխվածությունը

2) սույն ռազմավարության նպատակների իրագործման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

ա. բնապահպանական, մշակութային, սոցիալական և տնտեսական արժեքների համալիր գնահատմամբ ջրային ռեսուրսների ու ջրային համակարգերի առանձնացված կառավարման իրականացումը.

բ. ջրային ռեսուրսների ազատ հոսքի կուտակումը և տեղափոխումը՝ արհեստական ջրամբարների ու պատվարների կառուցումը.

գ. խմելու և ոռոգման ջրի համակարգերի շահագործման ծախսերի նվազեցումը.

դ. խմելու և ոռոգման ջրի համակարգերի պատշաճ պահպանումը և անվտանգ շահագործումը.

ե. ջրի տեղափոխման մեխանիկական եղանակի փոխարինումը ինքնահոսի, ջրարտադրության համակարգի արդիականացումը.

զ. ոռոգման ջրի մատակարարման դիմաց մուտքերի ապահովումը.

Է. ծախսերի նպատակայնության և արդյունավետության բարձրացումը.

ը. ջրակորուստների կրճատումը, ջրաչափական սարքերի տեղադրումը, խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի հաշվառման համակարգերի արդիականացումը.

թ. ոռոգման բնագավառում նոր դեբիտորական պարտքերի գոյացման կանխարգելիչ մեխանիզմների ներդրման նպատակով պարտադիր վճարման երաշխիքների ստեղծումը և այլն.

ժ. խմելու ջրի համակարգերի բարեփոխումների շարունակելը՝ նպատակ ունենալով բարձրացնելու համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ապահովելով կայուն, անվտանգ և հուսալի ջրամատակարարման հասանելիությունը հանրապետության բոլոր համայնքներում.

ժա. ջրամատակարար կազմակերպության սպասարկման տարածքում չընդգրկված շուրջ 570 բնակավայրերի կլաստերների ներդրումային ծրագրերի իրականացումը.

ժբ. վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների ապահովումը, իսկ չսպասարկվող տարածքներում մատուցվող ծառայությունների համապատասխանեցումը՝ վարձակալությամբ սահմանված թիրախային ցուցանիշների հետ.

ժգ. կեղտաջրերի հեռացման բնագավառի հետագա զարգացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների մշակում.

ժդ. գործող ջրամբարների տեխնիկական անվտանգության ապահովման միջոցառումների իրականացումը.

ժե. փոքր և միջին ջրամբարաշինության ծրագրի իրականացումը.

ժզ. բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքներն ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու ծրագրի մշակում, հակահեղեղային միջոցառումների իրականացման առաջնահերթությունների գնահատում, ամենամյա աշխատանքների ծրագրի մշակում և իրականացում.

ժէ. ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, հողատեսքերի աղակալման, բնակավայրերի ջրակալման և տարափոխիկ հիվանդությունների կանխման, մշակաբույսերի բնականոն աճի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, գրունտային ջրերի մակարդակների կարգավորումը.

ժը. Որոտան-Արփա-Սևան ՀՏԿ-ում անվտանգ պահպանման և շահագործման միջոցառումների իրականացումը.

ժթ. ջրամատակարար կազմակերպության սպասարկման տարածքում չընդգրկված 570 բնակավայրերում խմելու ջրամատակարարման ծառայությունների սակագնի, ինչպես նաև մատակարարված ոռոգման ջրի դիմաց վճարների սահմանման ճկուն և խրախուսական մեթոդների կիրառում:

22. Կենսառեսուսների պահպանման ուղղությամբ՝

1) էկոհամակարգերի պահպանությունը,

2) կենսաբազմազանության ու կենսաբանական ռեսուրսների պահպանությունն ու կայուն օգտագործումը:

23. Հողային պաշարների պահպանման ուղղությամբ՝

1) հողային պաշարների արդյունավետ կառավարման և պահպանության հիմնախնդիրներից է հողերի աղտոտվածության վիճակի, հողերի վրա մարդածին և բնական բացասական ազդեցությունների մոնիթորինգի կազմակերպումն ու իրականացումը:

2) հողերի աղտոտվածության և դրանց վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի խնդիրներն են.

ա. հողերի վրա բնական ու մարդածին ազդեցությունների հետևանքով տեղի ունեցած փոփոխությունների բացահայտումը,

բ. բացահայտված փոփոխությունների գնահատումն ու հետագա ընթացքի կանխատեսումը,

գ. հողերի պահպանության ու արդյունավետ օգտագործման և խախտված հողերի վերականգնման ապահովման նախադրյալների ստեղծումը,

դ. հողերի վիճակի վատթարացման կանխարգելման և բացասական ազդեցությունների ու դրանց հետևանքների վերացման նպատակով անհրաժեշտ

բնապահպանական միջոցառումների իրականացման առաջարկությունների և միջոցառումների ծրագրերի մշակմանը նպաստելը,

ե. հողերի մոնիթորինգի վերաբերյալ համակարգված տեղեկատվական տվյալների շտեմարանի ստեղծման ու տեղեկատվության մատչելիության ապահովումը:

24. Անտառների կառավարման մասով՝

1) անտառային ոլորտում կառավարման համակարգի բարեփոխումների իրականացումը,

2) օրենսդրության կիրարկման համար ինստիտուցիոնալ դաշտի հստակեցումը,

3) անտառների պահպանության և ապօրինի անտառօգտագործումների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը,

4) մարդկային (մասնագիտական) կարողությունների և ոլորտային հզորությունների զարգացումը,

5) անտառային տնտեսության զարգացումը,

6) առկա կառավարման և տնտեսվարման գործառույթներ ունեցող ինստիտուցիոնալ միավորների վերակառուցումը և օպտիմալացումը,

7) անտառապատման և անտառավերականգնման ծավալների ընդլայնումը,

8) հանրապետությունում վառելափայտի բարձր պահանջարկի առկայությունը,

9) ոլորտի ֆինանսական ռեսուրսների բարելավումը և կայունացումը:

V. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

25. Սույն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ միջոցները տրամադրվում են ՀՀ պետական բյուջեի, օրենքով չարգելված միջոցների հաշվին, ինչպես նաև կարող են ներգրավվել միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցները:

26. Օգտակար հանածոների կառավարման մասով ներքոնշյալ միջոցառումները նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից ՝

1) երկրաբանական տեղեկությունների թվայնացման գործընթացի շարունակակայնության և հրապարակայնության ապահովում,

2) Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների պաշարների ու կանխատեսումային ռեսուրսների վիճակի վերլուծության իրականացում՝ ֆինանսական ապահովում չի պահանջվում,

3) օգտակար հանածոների պաշարների դասակարգմանը և գնահատմանը ներկայացվող պահանջների վերանայման և միջազգային լավագույն փորձին ներդաշնակեցման համար ճանապարհային քարտեզի կազմում՝ ֆինանսական ապահովում չի պահանջվում,

4) օգտակար հանածոների լքված հանքավայրերի կամ ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման հետևանքով արդյունահանում չիրականացվող հանքավայրերի հետագա օգտագործման նպատակահարմարության երկրաբանատնտեսագիտական գնահատում (Հայաստանի Հանրապետության

բնապահպանության նախարարության հետ համատեղ)՝ օրենքով չարգելված միջոցների հաշվին,

5) չշահագործվող հանքային ջրերի հանքավայրերի հորատանցքերի կամ աղբյուրների տարածքների իրավիճակի գնահատում՝ հանքավայրի ջրային պաշարները աղտոտումից զերծ պահելու նպատակով՝ օրենքով չարգելված միջոցների հաշվին:

27. Անտառային ոլորտում սույն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը: Անտառային ոլորտի բարեփոխումներն անհրաժեշտ է իրականացնել 3 տարվա ընթացքում՝ հետևյալ ուղղություններով.

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի N 7-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը ճանաչել որպես անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և կայուն օգտագործման բնագավառում լիազորված պետական մարմին,

2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգին փոխանցել «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով վերանայել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների կանոնադրությունները՝ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և կայուն օգտագործման բնագավառում լիազորությունների հստակեցման նպատակով, և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմում ստեղծել անտառների, բնության հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև կենսաբազմազանության և կենսաանվտանգության քաղաքականության վարչություն,

4) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության համակարգում ստեղծել անտառային պետական կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), այդ նպատակով համապատասխան իրավական ակտի ընդունում: Կոմիտեի կազմում անտառային պահպանության պետական ծառայության ստեղծում,

5) «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպում՝ «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի վերակազմակերպման արդյունքում ստեղծել անտառտնտեսություն պետական ոչ առևտրային կազմակերպություններ,

6) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի վերանայում,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N38 արձանագրության 1-ին կետով հավանության արժանացած արձանագրային որոշման վերանայում,

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1232-Ն որոշման վերանայում,

9) անհրաժեշտության դեպքում այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում,

10) կարողությունների զարգացում (ուսուցման ծրագրերի մշակում և դասընթացների շարունակական իրականացում, այդ թվում անտառի պահպանության, հատումների, վերականգնման, պաշտպանության պլանավորման և իրականացման բնագավառներում),

11) անտառկառավարման տեղեկատվական համակարգի շարունակական զարգացում,

12) անտառների որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ առաջնային տեղեկատվության վերհանում, գործողությունների պլանավորում և մոնիթորինգի համակարգի շարունակական զարգացում (հեռահար զոնդավորման և աշխարհատեղեկատվական համակարգի կիրառման (ԱՏՀ), դաշտային ուսումնասիրությունների իրականացում),

13) պահպանության նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների օգտագործում, տեսախցիկների համակարգի ներդրում, փայտանյութի (անտառներում և անտառից դուրս) տեղափոխման նկատմամբ հսկողության և վերահսկողության միջոցառումների ուժեղացում,

14) անտառօգտագործման ոլորտի նորագույն տեխնոլոգիաների և սարքավորումների ներմուծում և դժվարահաս անտառների օպտիմալ օգտագործում:

28. Անտառային ոլորտի սույն ռազմավարության իրականացման ռիսկեր են հանդիսանում.

1) անհրաժեշտ նյութատեխնիկական, ֆինանսական և մասնագիտական ռեսուրսների սղությունը,

2) անտառային ոլորտում կառավարման և տնտեսվարման գործընթացների բացասական իներցիան,

3) անտառների որակական և քանակական ցուցանիշների վերաբերյալ անբավարար առաջնային տեղեկատվությունը:

29. Ջրային, հողային ռեսուսների և կենսապաշարների ոլորտների մասով սահմանված խնդիրների, նպատակների իրականացման համար առաջարկված միջոցառումների ծրագիրը ներկայացված է հավելվածի 2-ում:

30. Ռազմավարության իրականացման ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցները:

31. Առանձին գործողությունների, նյութատեխնիկական բազայի ապահովման, ինչպես նաև ուսուցման, վերապատրաստման ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ միջազգային դրամաշնորհային ծրագրերը:

VI. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

32. Ռազմավարության իրականացման արդյունքում օգտակար հանածոներիմասով կապահովվի՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում օգտակար հանածոների պաշարների կառավարման կայուն մեխանիզմների ձևավորումը,

2) օգտակար հանածոների պաշարների արդյունավետ օգտագործման համալիր համակարգի մշակումն ու ներդրումը,

3) օգտակար հանածոների պաշարների կառավարման ոլորտում շրջակա միջավայրի աղտոտման ծավալների կրճատումը,

4) ոլորտում միջազգային լավագույն մշակույթ և տեխնոլոգիաներ ունեցող ընկերությունների ներգրավումը,

5) օգտակար հանածոների պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների պահպանումն ու վերականգնումը,

6) օգտակար հանածոների պաշարների ոլորտում հեռանկարային զարգացման համար նախադրյալների ստեղծումը,

7) ընդերքի ոլորտի գործունեության առավել թափանցիկ դարձնելը,

9) ընդերքօգտագործման ընթացքում և հաջորդող ժամանակահատվածում շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի արդյունավետ իրականացումը,

10) բնակչության առողջապահական, սոցիալական, ինչպես նաև բնապահպանական ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացումը:

33. Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կատարումը, նպատակաուղղված լինելով կենսառեսուրսների, ջրային և այլ ռեսուրսների կայուն կառավարման բարելավմանը, կնպաստի բնության պահպանության և բանական օգտագործման, օրենսդրական դաշտի կատարելագործման առավել արդյունավետ իրականացմանը:

34. Ջրային համակարգերի մասով՝

1) Համակարգի առավել արդյունավետ շահագործում, ոռոգման ջրի ու ոռոգելի հողատարածքների առավել արդյունավետ/նպատակային օգտագործում, ֆինանսական կայունացում (հավաքագրումների մակարդակի բարձրացում), ՋՕԸ-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգում,

2) վարձակալության պայմանագրով նախատեսված հիմնական կատարողական ցուցանիշների ապահովում:

3) պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացմամբ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակի շոշափելի բարելավում:

4) Հայաստանի Հանրապետության բնակչությանը կայուն, հուսալի և անվտանգ ջրամատակարարման ծառայությունների ապահովում, ջրի որակի ապահովում, շուրջօրյա ջրամատակարարման աստիճանական ապահովում

5) ջրամբարաշինության ծրագրերի իրականացում և ջրամբարների անվտանգ շահագործում

6) Սևանա լիճ ջրի տեղափոխման ապահովում:

35. Կենսաբազմազանության մասով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առկա կլինի հետևյալ տեղեկատվությունը՝

1) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում օգտագործման ենթակա կենդանական և բուսատեսակների տեսակների տարածվածության, կազմի, բնակության վայրերի, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակի բացահայտում և դրանց պաշարների գնահատում,

2) կենդանական և բուսատեսակների աշխարհի կառավարումն իրականացնողների կողմից համապատասխան որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:

3) կենդանական և բուսատեսակների պաշարների օգտագործման թույլատրելի չափաքանակների հիմնավորում:

4) օգտագործման ենթակա կենդանատեսակների և բուսատեսակների մասին տեղեկատվական համակարգի ստեղծում:

36. Հողային պաշարների կառավարման ռազմավարության արդյունավետությունը պայմանավորված է հողօգտագործման, ինչպես նաև հողերի պահպանության ոլորտի օրենսդրության մասին բնակչության իրազեկությամբ: Դրանով կապահովվի հասարակության կողմից բացասական ազդեցության դրսևորման աղբյուրների և շրջակա միջավայրում տեղի ունեցող գործընթացների հետևանքների ընկալումը, ինչը թույլ կտա բնակչությանը առավել լայն ներգրավվել բնապահպանական հիմնախնդիրների լուծման աշխատանքներին:

37. Հողերի կառավարման ռազմավարության և դրանից բխող միջոցառումների ծրագրի իրականացման մոնիթորինգի և գնահատման արդյունքում կապահովվի նախատեսված ժամկետներում դրանց արդյունավետ իրականացումը: Դա հնարավորություն կտա հետևել գործողությունների իրականացման արդյունքներին և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ ու ճշգրտումներ կատարել ծրագրում, կապահովի համապատասխան գործընթացների օբյեկտիվությունը, թափանցիկությունը և կորպորատիվ պատ ասխանատվությունը:

38. Հողային պաշարների ուղղությամբ ռազմավարության և դրանից բխող միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է.

1) նվազեցնել հողերի աղտոտումը թափոններով, հատկապես օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններով՝ գույքագրելով ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտները և ներդնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման համակարգ,

2) նվազեցնել ընդերքօգտագործման խախտված հողերի մակերեսները՝ կիրառելով ռեկուլտիվացիայի կենսաբանական մեթոդներ,

3) նվազեցնել արտածին երկրաբանական պրոցեսների հետևանքով հողերի խախտումը,

4) մշակել Արարատյան դաշտի հողերի աղակալման կանխարգելման և աղազերծման մելիորատիվ աշխատանքների համապարփակ ծրագիր,

5) զարգացնել հողերի աղտոտվածության և այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի համակարգը,

6) մշակել հողերի մոնիթորինգի արդյունքների միասնական շտեմարան,

7) բարձրացնել հասարակության տարբեր խմբերի իրազեկվածությունն անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտների հիմնախնդիրների, գյուղատնտեսական արտադրության նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև գլոբալ բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ:

39. Անտառային ոլորտում առաջարկվող լուծումների արդյունքում.

1) անտառկառավարման ոլորտում հստակեցվում և տարանջատվում են վերահսկողական, հսկողական, անտառկառավարման, տնտեսավարման և պահպանության գործառույթները,

2) կառավարող և տնտեսվարող մարմինների կառուցվածքներն օպտիմալացվում են, մեծանում է տնտեսվարող կազմակերպությունների ինքնուրույնությունը, պատասխանատվությունը և աշխատանքի տնտեսական արդյունավետության բարձրացման ուղղությամբ շահագրգռվածությունը,

3) բարձրանում է անտառների ապօրինի օգտագործման դեմ պայքարի արդյունավետությունը, հստակեցվում է պատասխանատուների շրջանակը,

4) կբարձրանա անտառային ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության և նրանց կողմից ներդրումների արդյունավետությունը,

5) հստակեցնելով, կատարելագործելով և զարգացնելով հանրապետության անտառների կառավարման համակարգը և անցում կատարելով անտառների բնապահպանական, տնտեսական և սոցիալական գործառույթների հավասարակշռված քաղաքականության վարմանը, ինչպես նաև անտառօգտագործման բնափայտի մթերման գերակշռող տեսակի փոխարինումը բազմանպատակային օգտագործմամբ՝ անտառային համակարգը կայունացնելու, երկարատև ներդրումներ կատարելու և լրացուցիչ եկամուտներ ապահովելու գրավականը կլինեն,

6) համակարգի արդիականացման արդյունքում կնվազի ֆինանսական ծախսերը, կբարելավվի կառավարման արդյունավետությունը:

40. Տարեկան կտրվածքով մոնիթորինգի ենթակա են սույն ռազմավարության միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունները:

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թ.
փետրվարի 22-ի նիստի N 7
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	Նպատակը	Արդյունքը	Ֆինանսավորման աղբյուր	Պատասխատու կատարող	Ժամկետ
1.	Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում և հաստատում	մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վերաբերյալ քանակական և որակական տվյալների կատարելագործում	ջային ռեսուրսների վերաբերյալ հավաստի տվյալների առկայություն	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2021 թվական
2.	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում	Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ կնքված վարձակալության պայմանագրի դրույթների ապահովում	Մատակարարվող և հեռացվող ջրի որակական և քանակական հատկանիշների բարելավում	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սեփական միջոցներով և կեղտաջուր արտադրող տնտեսվարող սուբյեկտների միջոցներով (համաձայնությամբ)	ՀՀ ԷԵԲՊ ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ բնապահպանության նախարարություն	2031 թվական
3.	Գետերի ջրային պաշարների արդյունավետ օգտագործում և հոսքի կարգավորում	ջրային պաշարների կուտակում և նպատակային օգտագործում	ջրամբարաշինություն	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ ԷԵԲՊ ջրային տնտեսության պետական կոմիտե ՀՀ բնապահպանության նախարարություն	2022 թվական
4.	Օրենսդրական բարեփոխումներ՝ 1:Ոռոգման ջրի բնագավառում օրենսդրական բարեփոխումների պահանջների գնահատում և	Բնագավառում ներառված մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցում և օրենսդրությամբ	Համակարգի առավել արդյունավետ շահագործում, ոռոգման ջրի ու ոռոգելի հողատարածքների առավել արդյունավետ /նպատակային օգտագործում,	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառա-	2019 թվական

	<<Ոռոգման ջրի բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարելավման>> հայեցակարգի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ: 2.<<Ոռոգման ջրի մասին>> ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության աշխատակազմ:	ամրագրում:	ֆինանսական կայունացում (հավաքագրումների մակարդակի բարձրացում), ՋՕԸ-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգում		վարման և զարգացման նախարարություն,ՀՀ բնապահպանության նախարարություն,ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2019 թվական
5.	Վարձակալության պայմանագրով նախատեսված <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ-ների) ապահովում՝ ջրամատակարարման շարունակականության, մատակարարվող ջրի որակի, չհաշվառվող ջրի կրճատման (մինչև 2031 թվականը՝ 30%-ի չափով) և բաժանորդների բավարարվածության վերաբերյալ:	Վարձակալության պայմանագրով նախատեսված հիմնական կատարողական ցուցանիշների՝ ջրամատակարարման շարունակականության, մատակարարվող ջրի որակի, կորուստների կրճատման և ջրամատակարարման ծառայությունների որակի վերաբերյալ բաժանորդների բավարարվածության ապահովման հսկողության իրականացում և արդյունքների վերլուծություն:	Վարձակալության պայմանագրով նախատեսված հիմնական կատարողական ցուցանիշների ապահովում:	Վարձակալի ֆինանսական միջոցներ (համաձայնությամբ) և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	2031 թվական
6.	Վարձակալության պայմանագրով նախատեսված <<Վեոլիա Ջուր>> փակ բաժնետիրական ընկերության պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի (ՊԿԱԾ) շրջանակներում մինչև 2031 թվականն առնվազն 37.5 մլրդ դրամի աշխատանքների իրականացման ապահովում:	Վարձակալի ֆինանսական միջոցներով իրականացվող ՊԿԱԾ-ի իրականացում, որի արդյունքում կապահովվի համակարգերի տեխնիկական վիճակի բարելավում	Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացում	Վարձակալի ֆինանսական միջոցներ (համաձայնությամբ)	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե,	մինչև 2031 թվականը (տարեկան շարունակական)

7.	ՀՀ տարածքում կենսաբազմազանության բիզնես ներուժի գնահատման, անձնագրավորման և էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ	Կենսաբազմազանության բիզնես ներուժի անձնագրավորման մեթոդոլոգիայի առկայություն, որի միջոցով հնարավոր կլինի անձնագրավորել ու գնահատել կենսաբազմազանության բիզնես ներուժը, նպաստել կենսաբազմազանության և էկոտուրիզմի առկա պոտենցիալի արդյունավետ օգտագործման եղանակների մշակմանը:	Կձևավորվի կենսաբազմազանության տվյալների համալիր, միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգ՝ ըստ ՀՀ մարզերի:	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահ-պանության նախարարություն	2020 թվական
8.	Արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման ենթակա կենդանատեսակների հաշվառման աշխատանքների իրականացում	Արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման ենթակա կենդանատեսակների հաշվառում, չափաքանակների որոշում, նյութերի թվայնացում	Արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման ենթակա կենդանատեսակների հաշվառման արդյունքում առկա կլինի տնտեսական արժեք ներկայացնող և արդյունագործական ու սոցիալական նշանակություն ունեցող տեսակների ուսումնասիրության և օգտագործման ենթակա չափաքանակների վերաբերյալ հիմնավորումներ, ստացված տվյալների	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահ-պանության նախարարություն	2018-2020թթ.

			վերլուծության հիման վրա GIS քարտեզագրում, նյութերի թվայնացում, որն էլ իր հերթին կնպաստի կենդանական աշխարհի պետական կադաստրի ստեղծմանը, վարմանը, ինչպես նաև հիմք կհանդիսանա կենդանական աշխարհի մոնիթորիգի իրականացման համար:			
9.	Մշակել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել ՀՀ օրենքի նախագիծ «Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»:	Սահմանել բուսական ռեսուրսների գնահատման և օգտագործման ենթակա չափաքանակների որոշման մեխանիզմները:	Կկատարելագործվի: բուսաբանական ռեսուրսների կառավարումը	Ֆինանսական ապահովում չի պահանջում	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2018թ.
10.	Բացահայտել լայն կիրառում ունեցող բուսատեսակները և որսակենդանիները, գնահատել դրանց պաշարները և որոշել հավաքի/որսի չափաքանակները:	Աջակցել կենսառեսուրսների կայուն կառավարման սկզբունքների ներդրմանը:	Կենսապաշարների մասին հստակ տեղեկատվության հիման վրա կիրականացվի կենսաբազմազանության տեսակների կայուն օգտագործում:	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2019թ.-շարունակական
11.	ՀՀ բնապահպանության նախարարության կայք էջում ստեղծել տեղեկատվական համացանցային ռեսուրս՝ կենսաբազմազանության պահպանության և կայուն օգտագործման մասին:	Ապահովել ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով ոլորտային խնդիրների մասին իրազեկությունը:	Մշտապես գործող առցանց ռեսուրսի միջոցով կենսաբազմազանության նշանակության և արժեքի մասին լավ տեղեկացված հասարակության լայն	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն.	2018թ.-շարունակական

			շերտեր:			
12.	Մշակել դասընթացների ծրագիր և կազմակերպել կենսաբազմազանության ոլորտում գիտելիքների ձեռքբերման և որակավորման բարձրացման դասընթացներ տարբեր թիրախային խմբերի համար:	Նպաստել տարբեր թիրախային խմբերում կենսաբանական բազմազանության ոլորտում գիտելիքների ձեռքբերման գործընթացին:	Թիրախային խմբերը իրենց գործունեության ընթացքում հաշվի կառնեն կենսաբազմազանության հետ կապված խնդիրները:	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ կրթության և գիտության նախարարություն. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ).	2019թ.-շարունակական
13.	Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի պաշարի և վերականգնվող ռեսուրսի հաշվառում	Արարատյան դաշտի ստորգետնյա ջրային ավազանի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում	Ջրային ավազանի պաշարների և վերականգնվող ռեսուրսների ողջամիտ օգտագործում	ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիր	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2020 թ.
14.	Ընդերքօգտագործման թափոնների գույքագրում (այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների)	Հաշվառել ՀՀ տարածքում առկա ընդերքօգտագործման թափոնները, գնահատել թափոններով զբաղեցրած՝ տնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողային պաշարների ծավալը, գնահատել ընդերքօգտագործման թափոնների	Ընդերքօգտագործման թափոնների զբաղեցրած հողերի հաշվառում, դրանց աղտոտվածության գնահատում, աղտոտվածության նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված ծրագրերի կազմման համար ելակետային տվյալների առկայություն	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018-2025թթ.

		տեղադրման կամ պահման ընթացքում հողերի վրա դրևսորվող բացասական ազդեցությունը				
15.	Ընդերքօգտագործման արդյունքում հողերի աղտոտվածության և հողերի վրա այլ բացասական ազդեցությունների մոնիթորինգի իրականացնում	Հողերի աղտոտվածության, դեգրադացման վերաբերյալ պարբերաբար արդիականացվող տեղակատվության ստացման գործընթացի կանոնակարգում	ՀՀ տարածքին համարժեք՝ նպատակային տեղեկատվության ստացում ապահովող մոնիթորինգային ցանցի առկայություն	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ կառավարության 2002թ.-ի հունվարի 14-ի N 26-Ն որոշ-մամբ սահմանված պետական կառա-վարման լիազոր մարմիններ	2019թ. և շարունակա-կան